

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023Թ.-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բժշկական կազմակերպությունների կողմից իրականացվել է 65455.2 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածին եղել է 57750.9 հազ.դրամ՝ ավելացել է 7704.3 հազ. դրամով:

Ծննդոգնություն մատուցող բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 115 ծնունդ, 2022թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել են 106 ծնունդ՝ ավելացել է 9-ով:

2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 45 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 20 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 20 երեխա իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 387 բուժաշխատող:

Իրականացվում են օնլայն քննարկումներ ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատուների հետ կորոնավիրուսի և պապիլոմավիրուսի պատվաստումների գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ:

Մարզային ենթակայության բժշկական կազմակերպությունների բուժաշխատողներն ապահովվել են իրենց շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտները և շարունակում են մասնակցել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված սեմինարներին և դասընթացներին:

Եղեգնաձորի ԲԿ-ում իրականացվել է Ուիզմորի բժիշկների թիմի կողմից երեխաների հետազոտություն, որոնք կարիք ունեն մանկական վիրաբույժի, ռևմատոլոգի, մանկական էնդոկրինոլոգի, մանկական օրթոպեդի և մանկական նյարդաբանի խորհրդատվության:

Նպատակային ուսուցման համար կատարվել են 6 ուղեգրում ՀՀ ԵՊԲՀ:

10 բժշկի և 20 բուժքրոջ տվյալներ ներկայացվել են պետական պատվերի շրջանակներում վերապատրաստման համար:

04.05.2023թ. ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ իրականացվել է «Առողջ ապրելակերպի» իրազեկման հանրապետական արշավ վայոցձորյան միջոցառում, որին

մասնակցել են մարզի դպրոցականները և բժշկական հետազոտություններ են իրականացվել քաղաքացիների մոտ՝ շաքարային դիաբետ, արյան գերճնշման չափում, քաշի չափում և այլ միջոցառումներ:

Եղեգնաձորի ԲԿ-ում գործող “Հայկական ակնաբուժության նախագիծ” բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ազլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել են 102 վիրահատություն: Կատարվել է մարզի մանկապարտեզների երեխաների տեսողության սկրինինգ:

Կորոնավիրուսի (Covid-19) դեմ պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար բժշկական կազմակերպությունների հետ իրականացվել է առցանց և առկա խորհրդակցություններ: Կատարվել են այցեր բժշկական կազմակերպություններ, Ջերմուկ քաղաքի առողջարաններ:

Իրականացվում են գրիպի դեմ, ԿԿԽ, ԱԿԴՓ-Մ, ՄՊՊ և այլ պատվաստումներ՝ համաձայն պատվաստումային օրացույցի:

Կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և կատարվել է բաշխումներ մարզի բուժհիմնարկներին, հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ԱՆ:

Պարբերաբար կատարվել են այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ հակահամաճարակային կանոնների պահպանման ուսումնասիրման նպատակով:

Աշխատել ենք ենթակա և վերադաս կազմակերպությունների, ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի հետ :

Ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

Սոցիալական ապահովության բնագավառ

Ջինձառայողների սոցիալական ապահովություն. 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի և 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի, մարտական հերթապահության ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած զինձառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ պարբերաբար աշխատանքներ են տարվում: Օրենքով սահմանված հատուցումները ընտանիքները ստացել են: Պարբերաբար կատարվել են տնային այցելություններ և տրամադրվել է խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ կարիքավոր ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

« Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2023 թվականի առաջին կիսամյակում հաշվառվել է 1 անհայտ կորած զինծառայողի ընտանիք:

44-օրյա պատերազմի ժամանակ վիրավորված և հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների առողջական խնդիրների լուծման համար համագործակցել ենք «Գեյթվեյ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ և բժշկական զննումից, անհրաժեշտ հետազոտություններից հետո 7 շահառուներ անհրաժեշտ բուժման կուրս են անցել :

Համագործակցում ենք «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն»(ՍՕԱՐ)- Հայաստան ԲՀ-ի հետ: Զոհված և հաշմանդամություն ունեցող զինծառայողների կարիքավոր 8 ընտանիքների ԲՀ-ի կողմից տրամադրվել է անհրաժեշտ օգնություն:

Տեղահանված ընտանիքների սոցիալական ապահովություն- Արցախի Հանրապետությունից տեղահանված և « Կայոց ձորի մարզում բնակվող ընտանիքների կարիքները պարբերաբար ուսումնասիրվել են և հասարակական, բարգործական, միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքների արդյունքում նրանց անհրաժեշտ օգնություն է տրամադրվել: «Հայկական բարեգործական ընդհանուր միության» Հայաստանի ներկայացուցչության կողմից « Կայոց ձորի մարզպետարանին տրամադրված հագուստի մարդասիրական օգնությունից տրամադրվել է տաք հագուստ: Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքների խնդիրները լուծելու համար համագործակցում ենք նաև ՄԱԿ ՓԳՀ-ի հետ: Տեղահանված ընտանիքների շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվել « Կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն է տրամադրվել:

Հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցներ.

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը պետական դրամաշնորհով և բարեգործական ծրագրերով « Կայոց ձորի մարզում տնային պայմաններում խնամքի ծառայություններ է մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 74 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց՝ անհատական սոցիալական կարիքներին համապատասխան: Շահառուներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության, կենցաղային սպասարկման կազմակերպման և խնամքի իրականացման, իրավունքների պաշտպանությանն ուղղված ծառայություններ: Տարեցները գտնվում են մարզային և համայնքային իշխանությունների ուշադրության կենտրոնում: Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի 100-ամյա տարեց Վարդանուշ Գյուլնազարյանի ծննդյան օրվա առթիվ այցելել, շնորհավորել և նվերներ են հանձնել « Կայոց ձորի մարզպետը և Եղեգիս համայնքի ղեկավարը:

Հաշմանդամություն ունեցող անձանց ներառման աշխատանքները համակարգում է «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող « Կայոց ձորի մարզային հանձնաժողովը»: Հանձնաժողովը համագործակցում է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական, մարզային, համայնքային, սոցիալական ծառայություններ

տրամադրող հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ: Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրում>> ընդգրկման ենթակա հողօգտագործողների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու համար իրազեկման

Մարզի բնակչության սոցիալական վիճակը պարբերաբար ուսումնասիրվում է, կատարվում են տնային այցելություններ, սոցիալական լարվածությունը մեղմելու համար կարիքավոր ընտանիքներին օգնություն է տրամադրվում: ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից 242 սոցիալապես անապահով քաղաքացիների դրամական օգնություն է տրամադրվել: <<Հայկական բարեգործական ընդհանուր միության>> Հայաստանի ներկայացուցչության կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին տրամադրված հազուստի մարդասիրական օգնությունից մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է տաք հագուստ:

Վարչության աշխատակիցները ընդգրկված են միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների համակարգող խորհուրդների կազմում և պարբերաբար մասնակցում են նիստերի աշխատանքներին:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Կատարվել է աշխատանք արցախյան պատերազմում զոհված՝ 11, անհայտ կորած, վիրավորում ստացած և պայմանագրային զինծառայողների 6, Արցախի պատերազմից տուժած, տեղահանված՝ 9, բազմազավակ և բազմանդամ՝ 25, սոցիալապես անապահով՝ շուրջ 100, հաշմանդամություն ունեցող՝ շուրջ 25, ընտանեկան տարածայնություններ ունեցող՝ 26, խնամակալության տակ գտնվող երեխաներ ունեցող՝ 35, կրթությունից խուսափող և հակահասարակական վարք դրսևորող և օրինազանց՝ 12, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալների՝ 10 և այլ խնդիրներ ունեցող ընտանիքների հետ, ուսումնասիրվել է նրանց կարիքները, խնդիրների լուծման ուղղությամբ ցուցաբերվել աջակցություն: Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ կատարվել է համատեղ տնային այցելությունների վերլուծություն և քննարկում:

Վարչության մասնագետը, որպես Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամ, մասնակցել է Արենի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի (ԽՀՀ) նիստի՝ քաղաքացու նկատմամբ պատրոնաժ սահմանելու հարցով,

մասնագիտական խումբը մասնակցել է Ջերմուկի համայնքապետարանի աջակցող ցանցի նիստին՝ ընտանիքում առկա ճգնաժամային իրավիճակի քննարկմանը: Կատարվել է Ջերմուկ համայնքի առանց ծնողական խնամքի մնացած 3 երեխայի տարածքային հաշվառում, փաստաթղթերի ներկայացում ՀՀ ԱՍՀՆ՝ կենտրոնացված հաշվառման:

Ապահովվել է մասնակցությունը Եղեգնաձորի համայնքապետարանի իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներին:

Կատարվել է շարունակական աշխատանք «Նորք» տեղեկատվական բազայի հետ՝ համակարգ է ներմուծվել տվյալներ կյանքի դժվարի իրավիճակում գտնվող 57 երեխայի վերաբերյալ, վկայագիր է ստացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 14 երեխա, թարմացվել են Վայոց ձորի մարզից՝ հանրապետության խնամքի շուրջօրյա հաստատություններ ուղղորդված, մարզի ներառական կրթություն ստացող, խնամակալության տակ գտնվող, ինչպես նաև երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների վարաբերյալ շտեմարանները:

Կատարվել է որդեգրողի թեկնածու հաշվառվելու ցանկություն հայտնաձև մարզի Արենի և Վայք համայնքներից երկու ընտանիքների (4անձ) հաշվառման աշխատանքներ՝ կենսապայմանների ուսումնասիրություն, տարածքային հաշվառում, կենտրոնացված հաշվառման համար փաստաթղթերի փաթեթների ներկայացում ԱՍՀՆ, որդեգրման ենթակա երեխաների տվյալների դիտում՝ «Մանուկ» տեղեկատվական համակարգում:

Իրականացվել է համարեղ աշխատանք ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերում (ԱԳ և ԸԲԿԽ) պրոֆիլակտիկ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքների հետ: Տնային այցելությունների ժամանակ կատարվել է բացատրական, սոցիալ-հոգեբանական աշխատանք՝ կրկնակի իրավախախտումների և բռնության դեպքերի կանխարգելման, ընտանեկան տարածայնությունների լուծման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ: Այդ հարցում արդյունավետ է եղել համագործակցությունը «Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն ՀԿ-ի հետ, որի աջակցությամբ տարածայնություններ ունեցող և ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց ընտանիքներին տրամադրվել է մասնագիտական աջակցություն: Մասնագիտական խումբը մասնակցել է մարզի ուսումնական հաստատություններում «Դու մենակ չես» ՀԿ-ի նախաձեռնությամբ «Ինչ է ընտանեկան

բռնությունը և դրա հետևանքները>> ծրագրի շրջանակում իրականացված սեմինար-դասընթացներին: 01/07/2023 թվականի դրությամբ ոստիկանության բաժինների ԱԳ և ԸԲԿ խմբերում հաշվառված է եղել 6 անչափահաս: Հաշվառված անչափահասների կողմից կրկնակի իրավախախտումներ չեն գրանցվել: Ըստ ոստիկանության բաժինների տեղեկատվության՝ մարզում գրանցվել է բռնության 25 դեպք:

Իրականացվել է համագործակցություն միջազգային բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների հետ, աջակցություն՝ մարզում իրականացրած հումանիտար ծրագրերին և նախաձեռնություններին:

Մասնավորապես՝

Կայացել են հանդիպումներ, համագործակցության քննարկումներ և մեկնարկում ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի, Վորլդ Վիժն Հայաստանի, Մանկական զարգացման հիմնադրամի հետ համատեղ՝ «Հայաստանի սահմանամերձ համայնքների դիմակայունության ամրապնդում և տնտեսական վերականգնում» ծրագրի և Մանկական զարգացման հիմնադրամի հետ՝ CLASS ծրագրի շրջանակներում, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցչի հետ՝ հաշմանդամ երեխաների աջակցության ծրագրի շրջանակում: Տարվել է աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի, խնամքի հաստատությունում գտնվող և վերջին երկու տարում կենսաբանական ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքների հետ՝ հաստատությունների բեռնաթափման ծրագրի շրջանակում:

«Սահմանափակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպության իրականացրած «Կանայք հանուն խաղաղության. Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի աջակցություն ՀՀ-ում» վերապատրաստումների ծրագրի շրջանակներում իրականացվել է երկօրյա վերապատրաստման դասընթացներին մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների, մարզի համայնքների սոցիալական աշխատողների և դպրոցների հոգեբանների մասնակցության ապահովում:

Կատարվել է այցելություն <<Ոսկեփորիկ>> զարգացման կենտրոն՝ կենտրոնի աշխատանքին ծանոթանալու և հետագա համագործակցությունը խորացնելու նպատակով,

Իրականացվել է մասնակցություն՝

- ✓ << Առողջ ապրելակերպի արշավ Վայոց ձորում >> ծրագրին,
- ✓ Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառմանը,

- ✓ <<Հզոր կին. ավելի լավ ապագայի բանալին>> խորագրի լրող միջոցառմանը,
- ✓ Ջերմուկի ՄՍԾ-ի նախաձեռնությամբ կազմակերպված սոցիալական աշխատողի օրվան նվիրված միջոցառմանը,
- ✓ <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ի նախաձեռնությամբ Վայք քաղաքում կազմակերպված սոցիալ-հոգեբանական աջակցության դասընթացին,
- ✓ ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած սոցիալապես անապահով քաղաքացիներին դրամական օգնության տրամադրման հանձնաժողովի նիստերին,
- ✓ ՀՀ Վայոց ձորի <<Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի>> նիստերին,

Իրականացվել է կազմակերպական աշխատանք և մասնակցություն ՀՀ Վայոց ձորի Մարզպետի աշխատակազմում ստեղծված <<Գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողովի>> հերթական նիստին:

Կատարվել և ներկայացվել է

- ✓ Տեղեկատվություն ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն՝ ԱՄՆ պետդեսպարտամենտի հարցաշարի շրջանակում հավասար իրավունքներին, կանանց, երեխաներին, ընտանեկան բռնությանն առնչվող հարցաշարի վերաբերյալ,
- ✓ Տեղեկատվություն ՀՀ տարածքային և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի կատարման արդյունքների վերաբերյալ,
- ✓ Տեղեկատվություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ ՄԱԿ-ի ԿԶՆ-17 ցուցիչի (մարզում ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից բռնության ենթարկված 1-18 տարեկան երեխաների առկայություն) և մարզում ապրող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների վերաբերյալ,
- ✓ Զեկույց-պրեզենտացիա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ազգային հանձնաժողովի համար՝ ԸԿԵԻՊ բաժնի 2021 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ,
- ✓ 2022 թվականի առաջին կիսամյակի հաշվետվություն՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին:

- ✓ Աշխատանք կրթական հաստատությունների հետ և տեղեկատվություն բուլինգի վերաբերյալ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված հարցաշարի ուղղությամբ,
- ✓ Տեղեկատվություն Եղեգնաձորի դատախազին՝ 2022 թվականին ԸԿԵԻՊ բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ,
- ✓ Ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և քննարկում,
- ✓ Կատարված աշխատանքների մասին զեկուցագրերի ներկայացում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի

վարչության պետ

Վ.Ասլանյան

24.07.2023թ.